ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՍԱՐԳՍՅԱՆ Ս. Թ.

Հայ ժողովրդի հոգևոր-մշակութային կյանքի բաղկացուցիչ և 1794 թվականից անբաժան մաս կազմող մամուլի պատմությունն ինչ-որ չափով ուսումնասիրված է (թեև առկա են շատ հարցեր, որոնք կարոտ են լուսաբանման), սակայն այդ բնագավառի հետ անմիջական առնչություն ունեցող տեղեկատվական-հեռագրական գործակալությունների պատմությունն արդիական է և քիչ հետազոտված: Հատկապես, եթե հաշվի առնենք այն կարևոր հանգամանքը, որ արդի աշխարհում ընթացող տեղեկատվական պատերազմները չեն կարող չանդրադառնալ Հայաստանի Հանրապետության վրա: Ադրբեջանը և Թուրքիան վարում են նպատակաուղղված տեղեկատվական պատերազմ, ինչը լի է բազմաթիվ վտանգներով, որոնց դիմակայելու համար Հայաստանում ևս պետք է ապահովվի տեղեկատվական անվտանգության հստակ հայեցակարգ, որովհետև տեղեկատվական պատերազմների վտանգները չգիտակցող, դրանց դիմակայելուն անպատրաստ հասարակություններն ու պետությունները դատապարտված են պարտվողների շարքում լինելու: Իսկ նմանատիպ առճակատումներին լավագույնս դիմակայելու ամենագործուն միջոցներից են, անկասկած, տեղեկատվություն ապահովող կառույցները, որոնց մեջ կարևոր դերակատարություն ունեն տեղեկատվական-վերլուծական գործակալություններն ու համապատասխան ինտերնետային կայքերը: Դրանց պատմությունը, որը ժամանակակից փորձությունների շրջանում, անշուշտ, խիստ կարևոր է (արմատները ճանաչելու, սխալներն ու բացթողումները շտկելու, անցյալից դասեր քաղելու և այլ առումներով), հայ իրականության մեջ գրեթե ուսումնասիրված չէ, ինչը փաստում են թեմային վերաբերող գրականության բացակայությունն ու բնագավառի խնդիրներով մտահոգ մասնագետները: Բացառություն են կազմում, թերևս, մամուլում և ինտերնետային կայքերում սփռված՝ այս կամ այն առիթով գրված փոքր ու մեծ ելույթ-հոդվածները[1]: Ներկայացնենք հայ իրականության մեջ երբևէ գործած ու այժմ գործող հեռագրական և տեղեկատվական-վերլուծական գործակալությունների համառոտ պատմությունը:

Հայկական պետական լրատվական հեռագրական գործակալությունների առաջնեկն ու երեցը, հարկավ, «Արմենպրեսն» է[2], որը «ծնվել է» Հայաստանի Ազգային

---

[1] *Հոդվածը չծանրաբեռնելու համար ձեռնպահ ենք մնում բոլոր կայքերը թվարկելուց, նշենք ամենակարևորները՝ armenpress.am, arminfo.info, nt.am, mediamax.am, arka.am, news.am*

[2] *Աշխարհում առաջին հեռագրական գործակալությունը 1835 թ. Փարիզում հիմնված «Ֆրանս-Պրեսն» էր, նրան հաջորդեցին «Ասոշիեյթեդ պրեսը»՝ ԱՄՆ-ում (1848 թ.) և անգլիական «Ռոյթերը» (1851 թ.):*

խորհրդի 1918 թ. դեկտեմբերի 18-ին ընդունած օրենքով, այսինքն՝ Առաջին հանրապետության հետ մեկտեղ: Հաջողությամբ գործել է Երկրորդ հանրապետության ժամանակահատվածում և իր երկրորդ երիտասարդությունն է վերապրում Երրորդ հանրապետության օրոք: Մինչ համապատասխան ծառայության ստեղծումը, մեզանում տեղեկատվություն ստացվում էր «Կավրոստայից», որը Ռուսաստանի հեռագրական գործակալութ-յան անդկովկասյան բաժանմունքն էր: Սակայն երկրին պետք էր անաչառ, անկողմնակալ տեղեկատվություն, որի անհրաժեշտությունից էլ ստեղծվեց «Հայաստանի հեռագրական գործակալությունը» (այսուհետև՝ ՀՀԳ), որը եղել է Հայաստան պետության տարեգիրը դեռևս Առաջին հանրապետության ստեղծման ժամանակներից: Օրենքում ամրագրված էին ուշագրավ պահանջներ. բոլոր գերատեսչությունները պարտավոր էին տեղեկատվություն տալ հիշյալ գործակալությանը: Ավելին՝ օրենքով արգելվում էր մասնավոր անձանց կամ հաստատություններին տեղեկատվություն տրամադրել նախքան գործակալության լուր-հաղորդումների տարածումը: Ընդ որում՝ արգելվել է նաև նախքան դրանք գործակալությանը հաղորդելը տալ մասնավոր անձանց կամ հաստատություններին, ինչպես նաև գործակալության հեռագրերի արտատպումը այլ հրատարակություններում՝ բաժանորդ թերթերում դրանց հրապարակումից հետո 48 ժամվա ընթացքում:

«Արմենպրեսի» նախատիպ ՀՀԳ-ի կնքահայրը Սիմոն Վրացյանն է: Ըստ էության, նա եղել է այդ գործակալության առաջին ղեկավարը, աշխատակազմ ձևավորողը: Բոլոր աշխատակիցներին ինքն է ընտրել, իսկ կադրերը հիմնականում Թիֆլիսից էին հրավիրվում: Որոշ ժամանակ անց Հայաստանի տեղեկատվական գործակալությունն անցնում է ներքին գործոց նախարարության ենթակայության տակ: Պատճառը թերևս այն էր, որ այս նախարարությունը նյութապես համեմատաբար ապահովված էր, տպարան ուներ, բացի դրանից, այստեղ էր կուտակվում ողջ ընթացիկ տեղեկատվությունը: 1919 թ. հունվարի 15-ին, նախօրոք այդ մասին ծանուցելով բաժանորդներին, «Հայհեռագործը» (նույն ՀՀԳ-ն է) թողարկում է իր առաջին պաշտոնական հեռագրային ժապավենը, որն ընդգրկում էր 22 կարճ լուր: Դրանք ուշագրավ տեղեկություններ էին հանրապետության առօրյայի, պետական շինարարության, ազգամիջյան փոխհարաբերություններում գլուխ բարձրացնող ներքին խժդժությունների մասին: «Հայհեռագործն» իր գոյության ավելի քան ինը տասնամյակի ընթացքում ունեցել է երեսունից ավելի ղեկավարներ:

Հայաստանի Ռազմահեղափոխական կոմիտեի 1920 թ. դեկտեմբերյան դեկրետներով, այլ ծառայությունների թվում, նոր որակ է ստանում նաև «Հայհեռագործը»: Նրա հիմքի վրա ստեղծվում է բազմապրոֆիլ մի հիմնարկություն. սկզբում՝ «Տպագրության և ագիտացիայի կոմիսարություն», ապա «Տպագրության և ագիտացիայի կոմիսարիատ», հետո՝ «Հայկավռոստա» անունով, որի գործառույթների մեջ էին մտնում ոչ միայն լրատվությունը, այլև պաշտոնական թերթերի հրատարակությունը, գրքերի, ձեռնարկների, բլանկների, այլ նյութերի

տպագրությունը, գովազդային պլակատների պատրաստումը, ինչպես նաև գրականության ընդունումն ու տեղաբաշխումը: 1921-ի հունվարից բազմապրոֆիլ հաստատությունն արդեն անցնում է Լուսավորության ժողովրդական կոմիսարիատի ենթակայության ներքո: Ի դեպ, որպես «Արմենպրեսի» առաջին գլխավոր խմբագիր հիշատակվում է Միքայել Ցիցիկյանի անունը: 1922 թ. հոկտեմբերի 2-ին ՀԽՍՀ Կենտրոնական գործադիր կոմիտեն որոշում է ընդունում Հայաստանի հեռագրական գործակալություն հաստատելու մասին: Անտեսելով նրա իսկական ծննդյան տարեթիվը՝ 1918 թ. դեկտեմբերի 18-ը, քաղաքական նկատառումներով, տարիներ շարունակ 1922 թ. հոկտեմբերի 2-ը համարվել է «ՀՀԳ-Արմենպրես»-ի ծննդյան վկայականը, ինչն իրականությանը չի համապատասխանում:

Խորհրդային տարիներին ևս Հայաստանի ղեկավարները մշտապես գիտակցել են «Արմենպրեսի» տեղեկատվական ծառայության կարևորությունը, ուշադրություն ցուցաբերել նրա հանդեպ: Որովհետև «Հայհեռագործ-Արմենտա-Արմենպրես»-ը շարունակաբար արտահայտել է հասարակության ցավերն ու մտահոգությունները. նա ժողովրդի հետ պայքարել է ֆաշիզմի դեմ, ուրախությամբ արձանագրել հետպատերազմյան շրջանում հայորդիների ներգաղթը, անմասն չի մնացել մշակութային կյանքում տեղի ունեցող իրադարձություններից: Սիմոն Վրացյանից հետո ՀՀԳ-ի կյանքում կարևոր դերակատարություն է ունենում խորհրդահայ ղեկավարներից լայնախոհ, հայրենասեր Աղասի Խանջյանը:

«Արմենպրեսը» տեղեկատվություն հաղորդելու առումով լուրջ դեր է կատարում նաև Հայրենական մեծ պատերազմի տարիներին, երբ գործակալությունը մեր ժողովրդին պաշտոնական տեղեկություններ էր տրամադրում «Հայհեռագործի» ստեղծած 100-ից ավելի տեղեկատվական պատուհանների (ագիտացիոն-քաղաքական պլակատների) միջոցով:

1959-ի դեկտեմբերից գործակալությունն ունենում է նաև իր առանձին, մասնագիտացված ֆոտոծառայությունը՝ «Ֆոտոխրոնիկա-ՀՀԳ» անվամբ, որը կարճ ժամանակում մեծ համբավ է ձեռք բերում: 1972 թվականը պետական լրատվական գործակալության համար նշանակալից էր մի շարք առումներով. ՀԽՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր «Հայկական հեռագրական գործակալությունը» մարտի 21-ից վերակազմվում է միութենական-հանրապետական պետական տեղեկատվական գործակալության, որն սկսում է օգտվել նաև Հայկական ԽՍՀ Մինիստրների՝ խորհրդի պետական կոմիտեի իրավունքներից: Նույն տարում որոշվում է փոխել հնաբույր՝ «Հայաստանի հեռագրական գործակալություն» անվանումը: Հայտարարվում է անվանափոխման մրցույթ: Ներկայացված ամենատարբեր առաջարկություններից ընտրվում է «Արմենպրեսը»:

Հայաստանի Երրորդ հանրապետության շրջանում ևս իշխանություններն իրենց ուշադրության կենտրոնում պահեցին գործակալությունը: Արդեն 1998 թ. հունվարի 22-ին ՀՀ կառավարության կողմից հաստատվում է «Արմենպրեսի» նոր կարգավիճակը. այն դառնում է պետական բաժնետիրական ընկերություն, որի

բաժնետոմսերը տնօրինում է ՀՀ պետությունը, իսկ «Արմենպրեսի» ղեկավար մարմինը հիմնադրի լիազոր ներկայացուցիչներն են՝ նախագահի աշխատակազմից, ԱԺ-ից, կառավարությունից: Սա արդեն իսկ նրա կարևորության վկայությունն է: Մեր օրերում այն թողարկում է տասից ավելի լրատվական ժապավեն՝ պաշտոնական, քաղաքական, տնտեսական, հասարակական, մարզային, տարածաշրջանային, միջազգային, մշակութային, մարզական, հարցազրույցներ, ֆոտո նորություններ: Տեղեկատվական դաշտում ուրույն տեղ ունի գործակալության ինտերնետային՝ «Արմենպրես կետ էյէմ» (www.armenpress.am) կայքը (հայերեն, անգլերեն, ռուսերեն): Կայքում թողարկվում են լրատվական 11 ժապավեն՝ պաշտոնական, քաղաքական, տնտեսական, մարզային, հասարակական, միջազգային, մշակութային, մարզական, ակնարկներ, հարցազրույցներ և ֆոտո նորություններ: Այստեղ առկա է Հայաստանի և տարածաշրջանի յուրահատուկ պատմությունը ներկայացնող՝ տեղեկատվական և լուսանկարչական հարուստ արխիվ (պահվում է շուրջ 100,000 լուսանկար): Կայքի գլխավոր էջում տեղադրվում է նաև տարադրամի փոխարժեքը՝ ըստ օրվա, և առանձին հատվածում՝ գովազդ: Այստեղ գործում է անկողմնակալ և հրատապ լրատվություն ապահովելու կարգախոսը:

«Արմենպրեսը» բազմաթիվ բաժանորդներ ունի ինչպես Հայաստանում, այնպես էլ արտերկրում: Զանգվածային լրատվության միջոցներից բացի, դրանց թվում են դեսպանատներ, միջազգային կազմակերպություններ, բանկեր, ֆինանսական կառույցներ, վերլուծական կենտրոններ, ինստիտուտներ: Նրա տեղեկատվության սպառողներն են թե՛ լրատվամիջոցները՝ հեռուստատեսություն, ռադիո, մամուլ, թե՛ միջազգային կազմակերպություններն ու արտասահմանյան գործընկերները, թե՛ դեսպանատներն ու ֆինանսական կառույցները, թե՛ վերլուծական-հետազոտական ինստիտուտները: Այսինքն՝ գործակալության տեղեկատվության պահանջարկն այսօր մեծ է և ընդգրկուն: 2011 թ. հոկտեմբերից «Արմենպրեսի» աշխատանքները ղեկավարում է Արամ Անանյանը:

«Արմենպրեսի» համագործակից գործակալություններից են տեղեկատվական դաշտի առաջատարներ «Իտար-ՏԱՍՍը», «Ռոյթերը», «Սինխուան», «ԻՌՆԱՆ», «ՄԵՆԱՆ», «ԲՏԱ»-ն, «Ռոմպրեսը», «ԲԵԼՏԱՆ», «Կազինֆորմը» և շատ այլ լրատվամիջոցներ, որոնց հետ իրականացվում է տեղակությունների եւ լուսանկարների փոխանակում: «Արմենպրեսը» ԱՊՀ երկրների ազգային գործակալությունների ասոցիացիայի, ինչպես նաեւ Սևծովյան տարածաշրջանի տեղեկատվական գործակալությունների ասոցիացիայի անդամ է, տեղեկատվական գործակալությունների համաշխարհային ֆորումի մասնակից և աշխուժորեն համագործակցում է սփյուռքի համապատասխան կառույցների և սույն կազմակերպությունների անդամ-գործակալությունների հետ: Մոտ ապագայում նախատեսվում է իրականացնել նոր ծրագրեր. տեղեկատվության եռալեզու (հայերեն, ռուսերեն, անգլերեն) թողարկումները համալրվելու են այլ (ըստ

ամենայնի՝ մեր մերձակա հարևանների) լեզուներով, ինչպես նաև ավելի օպերատիվ ու բազմահարուստ դարձնելու լրատվությունը:

Դեռևս Հայաստանի Երրորդ հանրապետության արշալույսին ընդունված օրենսդրական մի շարք ակտերով ազատականացվեցին կյանքի շատ ասպարեզներ, այդ թվում՝ մամուլն ու ողջ լրատվա- կան դաշտը[3]: Դա օպերատիվ ու բազմակողմանի տեղեկատվության նոր ու առավել ընդգրկուն պահանջարկ առաջացրեց և հնարավորություն՝ հեռագրական-վերլուծական նոր գործակալությունների ստեղծման համար[4]: Եվ պատահական չէր, որ «Արմենպրեսի» կողքին հաջորդաբար ստեղծվեցին մի շարք նոր գործակալություններ:

1991 թ. հուլիսին, մի խումբ պրոֆեսիոնալ լրագրողների կողմից (Ալեքսանդր Գրիգորյան, Էմանուել Մկրտչյան, Ալեքսանդր Ավանեսով և ուրիշներ), ստեղծվեց Հայաստանի անկախ տեղեկատվա-կան գործակալություններից մեկը՝ «ԱրմՐնֆոն» (Agency of Rating and Marketing Information), որն սկզբում հայտնի էր «Սնարք» (1990- 2001 թթ.) ապա՝ «Դե-ֆակտո» անուններով և գործում էր 1990 թ.: «ԱրմՐնֆո» վերաձևակերպումից անմիջապես հետո գործակալությունը շարունակեց «լրատվական ազդեցության» ոլորտի ընդլայնմանը նպատակաուղղված աշխատանքը: Այսօր գործակալությունն իրավամբ համարվում է ամենահաջող մասնավոր, անկախ նա- խագծերից մեկը Հայաստանի զանգվածային լրատվության մեջ: Այն տեղեկատվական ոլորտի մշտական մատակարարներից է: Տրամադրելով քսանամյա հարուստ պատմություն ունեցող տեղեկատվական բազա՝ «ԱրմՐնֆոն» անգնահատելի գործընկեր է մարքեթինգային ոլորտում առաջ գնացող որևէ կազմակերպության համար: Նրա տեղեկատվական և վերլուծական բազան ներառում է ինչպես ամենօրյա ընդհանուր նորություններ, այնպես էլ մասնա- գիտական հաշվետվություններ էներգետիկայի, բանկային, ֆինանսական, տեղեկատվական տեխնոլոգիաների և այլ բնագավառների վերաբերյալ: Գործակալությունը մեծ ճանաչում ունի նաև իր բանկային և ոչ բանկային ֆինանսական կառույցների դասակարգման եռամսյակային հրատարակումների շնորհիվ: «ԱրմՐնֆոն» լայն կապեր ունի ինչպես նախկին ԽՍՀՄ տարածքում, այնպես էլ նրա սահմաններից դուրս: Գործակալությունը հաջողությամբ համա- գործակցում է խոշորագույն մեդիա-կառույցների հետ, ինչպես՝ REUTERS, BBC, EUROMONEY, RBC և ուրիշներ: Հայաստանից և Անդրկովկասից իր թեժ նորություններով «ԱրմՐնֆոն» ներկա է Չինաստանի, Իրանի, Մերձավոր Արևելքի լրատվական շուկաներում: Այն ունի սերտ, ժամանակի փորձությունն անցած գործընկերային կապեր հարևան երկրների՝ Վրաստանի («BS Press») և Ադրբեջանի («Թուրան») լրատվական գործակալությունների հետ: Ներ-քին շուկայում սերտորեն

---

[3] *«Մամուլի և զանգվածային լրատվության մյուս միջոցների մասին» օրենքն Ազգային ժողովի կողմից ընդունվել է 1991 թ. հոկտեմբերի 8-ին, լրացվել, բարեփոխվել է 2003 թ. դեկտեմբերի 13-ին:*

[4] *«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքն ընդունվել է 2003 թ. սեպտեմբերի 23-ին և ուժի մեջ է մտել նույն տարվա նոյեմբերից:*

համագործակցում է օտար պետություն-ների գրեթե բոլոր դիվանագիտական ներկայացուցչությունների, առևտրային բանկերի և խոշորագույն ընկերությունների հետ: Գործընկերային և բարեկամական են նրա կապերը այնպիսի պրոֆեսիոնալ ԶԼՄ-ների հետ, ինչպիսիք են «Գոլոս Արմենիի», «Առավոտ», «Դելովոյ էքսպրես» թերթերը, «Շանթ» և «Ար» հեռուստաալիքները: Նրա աշխատանքը բազմակողմանի է՝ այդ բառի ամենալայն իմաստով. լուսաբանել քաղաքականությունը, տնտեսությունը, ֆինանսները, սպորտը, մշակույթը: Գործակալությունն ունի ներքաղաքական լրատվության, արտաքին քաղաքականության, տնտեսական նորությունների, ֆինանսական վերլուծության, սոցիալական քաղաքականության և սպորտի, մարքեթինգի և վաճառքի բաժիններ ու ստորաբաժանումներ: Այն օրական թողարկում է մինչև 100 միավոր տեքստային և աղյուսակային լրատվություն: «ԱրմԻնֆոն» իրավամբ համարվում է Հայաստանի վերաբերյալ քաղաքական ու գործարար լրատվության լիարժեք, համակողմանի և հավաստի նորությունների հիմնական, անկախ մատակարար տեղական ու միջազգային շուկաների համար:

2005 թ. «ԱրմԻնֆոն» հիմնադրեց «Մ-Ինֆո» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը: Որպես տեղեկատվական շուկայի առաջատար «ԱրմԻնֆոյի» ստեղծած կառույցներից մե- կի՝ «Մ-Ինֆո»-ի ռազմավարությունը հենվում է նորությունների ստեղծման բաղադրիչների (տվյալների բազա, զանգվածային լրատվական գործիքներ և ուղիներ) գնահատման և վարկանիշի տեխնիկաների, լուրջ մարքեթինգային ռեսուրսների և սեփական անձ-նակազմի գործարար հմտությունների սիներգետիկ համադրության վրա: Կառույցի գործունեության մեջ մշտապես զուգակցվում են մարքեթինգի և մենեջմենթի ոլորտում իրականացված միջազգային ակադեմիական հետազոտությունները, դրանց առաջարկած արդի մեթոդները և գործնական աշխարհի առկա պահանջները: Նման միաձուլման հիման վրա մշակվել են այնպիսի ծառայությունների փաթեթներ, ինչպիսիք են կորպորատիվ ապրանքանիշի, հեղինակության և վարկանիշի գնահատման, մշակման, պլանավորման ու ստեղծման գործընթացները, որոնք ժամանակակից մարքեթինգի և գործարարության առաջնահերթ մարտահրավերներն են:

«Նոյյան տապան» լրատվական-վերլուծական կենտրոնը հիմնադրվել է 1991 թ.[5] այն միշտ հավատարիմ է իր սկզբունքներին՝ լինել անկախ, անաչառ և արհեստավարժ: Գոյության տարիների ընթացքում լրատվական կենտրոնը գործել է Հայաստանի և աշխարհի ավելի քան 30 երկրների լրատվական շուկայում, պատրաստել և առաքել է լուրեր Հայաստանում, տարածաշրջանում և աշխարհում կատարվող քաղաքական, տնտեսական, սոցիալական ու մշակութային

[5] «Նոյյան տապանը», որը որպես կոոպերատիվ կառույց, հիմնադրել են (1988 թ.) Տիգրան և Գայանե Առաքելյան ամուսիններն ու հաշվապահ Սամվել Դանիելյանը, դեռևս խորհրդային տարիներին զբաղվում էր հրատարակչական գործունեությամբ:

կարևորագույն իրադարձությունների մասին: Բացի այդ, «Նոյյան տապանն» այժմ համակարգված ձևով պատրաստում է Սփյուռքի հայ համայնքների և սփյուռքահայության մասին լուրեր հայերեն, անգլերեն, ռուսերեն և պարսկերեն: Սկսած 1993 թ.՝ կենտրոնը պատրաստում է նաև լրատվական տեսաարտադրանք. ռեպորտաժներ, հաղորդումներ և այլն: «Նոյյան տապան» լրատվական-վերլուծական կենտրոնի լրատվական արտադրանքի մեջ մտնում են՝ ամենօրյա լրատվություն, մամուլի և հեռուստատեսային մոնիթորինգ, «The Noyan Tapan Highlights»[6] անգլիալեզու, իսկ 2007-ից սկսած նաև ֆրանսալեզու շաբաթաթերթերը և այլն: 1995-ից գործում է «Նոյյան տապանի» տեքստային և ֆոտոլրատվությունը, 1998-ից արդեն տեսալրատվությունը հասանելի է համացանցից օգտվողների համար՝ «Նեթ. էյէմ» (www.nt.am) կայքում լուրերը ներառում են քաղաքական, տնտեսական, հանրային, մշակութային, մարզական և այլ ոլորտների անցուդարձը և տեղադրվում են երեք լեզվով՝ հայերեն, ռուսերեն, անգլերեն: Կայքը լրատվական-վերլուծական կենտրոն է, որը 2003 թվականից, գործակալության նախաձեռնությամբ, ունի նաև առանձին էջով էլեկտրոնային գրադարան, որի նպատակն է գրքասեր հանրությանը ներկայացնել Հայաստանի և սփյուռքի հրատարկչություններում լույս տեսած նոր գրքերը, կապեր ստեղծել հրատարակիչների, տպագրիչների, գրավաճառների և ընթերցողների միջև: Ընթերցողներն այստեղ հնարավորություն ունեն կատարել գրքերի էլեկտրոնային գնումներ, պատվիրել հրատարակչական աշխատանքներ, ներկայացնել ապագա գրքերի ձեռագրեր և այլն: Կայքն ունի «Բիզնեսն այսօր» տնտեսական-տեղեկատվական պորտալը, որտեղ էլ գովազդատուները առաջարկում են իրենց ծառայությունները: Ի դեպ, «Նոյյան տապանի» գովազդա-յին ծառայությունը Հայաստանում առավել արդյունավետ գործող գովազդային գործակալություններից է: Ստեղծման առաջին իսկ օրվանից «Նոյյան տապանը» լրատվական կապեր հաստատեց աշխարհի տարբեր լրատվամիջոցների հետ՝ նպատակ ունենալով հնարավորինս շատ երկրներում լրատվություն տարածել Հայաստանի մասին: Կենտրոնը համագործակցել և համագործակցում է արտերկրյա շատ կազմակերպությունների, այնպիսի խոշորագույն լրատվական գործակալությունների հետ, ինչպիսիք են՝ «Ազատություն» ռադիոկայանը, «Ռոյթեր», «BBC», «DPA», «Ֆրանս-պրես» և այլն, ինչպես նաև Հայաստանում գործող գրեթե բոլոր դեսպանատները, միջազգային խոշոր կազմակերպությունների ներկայացուցչությունները, զանգվածային լրատվամիջոցները: 2000 թ. «Նոյյան տապանն» արժանացավ միջազգային BID որակի ոսկե մրցանակին[7]:

---

[6] *Թերթի թե՛ անգլիալեզու թե՛ ֆրանսալեզու տարբերակների գլխավոր խմբագիրն է գործակալության հնագույն աշխատակից Հարություն Խաչատրյանը: Այն բավական ծավալուն է՝ 20 էջ, բացի տեղեկատվական բաժիններից, ունի նաև ժամանցի էջեր:*

[7] *Վերջին տարիներին գործակալությունը ֆինանսական որոշ դժվարություններ ունի, ինչը խոչընդոտում է ստեղծագործական բեղուն աշխատանքին:*

«Մեդիամաքս» լրատվական գործակալությունը հիմնադրվեց 1999 թ. մայիսին. այն հենց սկզբից շեշտը դրեց որակի, օպերատիվության ու հավաստիության վրա՝ ընդամենը մեկ տարի անց դառնալով Հայաստանի և Հարավային Կովկասի ամենահաճախ մեջբերվող գործակալություններից մեկը: «Մեդիամաքսն» իր հաճախորդներին առաջարկում է որակյալ նորություններ և վերլուծական նյութեր՝ ներքին ու արտաքին քաղաքականության, տնտեսության ու բիզնեսի թեմաներով: Բացառիկ հարցազրույցները, որոնց մասնակցել են արտասահմանցի հարյուրավոր քաղաքական գործիչներ, ինչպես՝ «Մեծ Ութնյակի» երկրների առաջնորդները, ՆԱՏՕ-ի, Եվրոպական միության, ԵԽ և ԵԱՀԿ ղեկավարները, դարձել են գործակալության այցեքարտը:

«Մեդիամաքսն» առաջարկում է հետևյալ վճարովի ծառայությունները. «Օն-լայն նորություններ Հայաստանից» (հանրապետության քաղաքական, տնտեսական, հասարակական և սոցիալական կյանքի կարևորագույն իրադարձություններն՝ օն-լայն ռեժիմով), «Շաբաթական տեսություն» (վերլուծական հոդված կամ հարցազրույց շաբաթվա կարևորագույն իրադարձության մասին՝ հիմնականում արտաքին քաղաքականության կամ տարածաշրջանային թեմատիկայի շեշտադրմամբ), «Հարավային Կովկաս. պաշտպանություն, անվտանգություն և հակամարտությունների կարգավորում» (ամենշաբաթյա տեղեկագիր, որում ներկայացված են Հայաստանի, Ադրբեջանի և Վրաստանի ռազմաքաղաքական կարևոր իրադարձությունները, շոշափվում են հակամարտությունների կարգավորման, անվտանգության ապահովման խնդիրները)՝ բոլորն էլ հայերեն, անգլերեն և ռուսերեն, և այլն:

«Մեդիամքսը» 2003 թ. սկզբնավորեց ինտերնետային մի քանի նախագծեր և 2009 թ. պաշտոնապես հայտարարեց «Մեդիամաքս» ինտերնետային հոլդինգի ստեղծման մասին: Հոլդինգը բաղկացած է հետևյալ կայքերից և պորտալներից. «Ավտո.էյէմ» (Auto.am-Ավտոմոբիլային Հայաստան), «Բանկ.էյէմ» (Bank.am-Ֆինանսական Հայաստան), «জոբ էյէմ» (Job.Bank.am-Աշխատանք մենեջերների համար), «Քափիթալմարկետ.էյէմ» (Capitalmarket.am-Հայաստանի արժեթղթերի շուկան), «Այթել.էյէմ» (Itel.am-Առաջխաղացող Հայաստան), «Բրավո. էյէմ» (Bravo.am-Ներկայացնում է տեղեկություններ շոու-բիզնեսի իրադարձությունների, թատերական ու հեռուստատեսային պրեմիերաների մասին, ռեպորտաժներ փարթիներից): Կայքի «Մեդիամաքս. էյէմ» (www.mediamax.am) գլխավոր էջի ձախ հատվածում (ինչպես շատ լրատվական կայքեր) ներկայացված են այն թեմա- ները (այս դեպքում՝ Քաղաքականություն, Ընտրություններ 2012, Երևան, Լեռնային Ղարաբաղ, Հայաստան-Թուրքիա, Տարածաշրջան, Արտաքին քաղաքականություն, Բանակ և ոստիկանություն, Հասարակություն, Բիզնես, Կրթություն), որոնցում առանձին էջերով տեղադրվում են տվյալ թեմային վերաբերող նյութերը: «Մեդիամքս» ինտերնետային կայքի գլխավոր էջում կարելի է տեսնել միանգամից 4 շարժական՝ անիմացիոն գովազդ՝ էջի տարբեր հատվածներում: Կարծում ենք՝ սա ոչ թե

թերություն, այլ լրատվամիջոցի և գովազդատուի ցանկության և փոխհամաձայնության արդյունք է: Իհարկե, գլխավոր էջում գովազդի առկայությունը, այն էլ հետաքրքիր ու հաջող տեղում, միանգամից գրավում է ընթերցողի ուշադրությունը, շեղում, երբեմն էլ գովազդով տարված մոռանում ես հետաքրքրող նյութերի մասին: Սակայն դա բնավ չի ստվերում կատարված աշխատանքը: Կայքում ներկայացվող նյութերն իսկապես արդիական են, կարևոր և խնդրահարույց, և երբեք չի նկատվում մասնագիտական պատրաստվածության և լրագրողների համախմբվածության պակաս:

«Հենարան էյ էմ» տեղեկատվական-վերլուծական գործակալությունը հիմնադրվել է 2010 թ., «Հենարան» հասարակական կազմակերպության հիմնադիրների խորհրդի կողմից: Գործակալության խնդիրն է հավաստի և բազմակողմանի լրատվություն ապահովել ողջ աշխարհից, հոդվածներ, թղթակցություններ, վերլուծություններ, հարցազրույցներ, մեկնաբանություններ, ակնարկներ, պատմություններ ներկայացնել մեր կողքին ապրող մարդկանց մասին, տալ տեղական և միջազգային մամուլի անաչառ տեսություն, ֆոտո- ռեպորտաժներ ու տեսանյութեր: Նպատակը՝ ՀՀ-ում քաղաքացիական հասարակության և ազատ խոսքի կայացումը, ինչին կարող է նպաստել տեղեկատվության փոխանակումը ԶԼՄ-ների, հասարակական-քաղաքական գործիչների, տեղական ու միջազգային կազմակերպությունների և հասարակության միջև: «Հենարանի» տեսադաշտում են տեղեկատվական-վերլուծական այլ կառույցների ուշադրությունից դուրս մնացած, բայց կարևոր թեմաներն ու իրադարձությունները: Գործակալությունը հաճախ է հանդես գալիս մասնագիտական համախմբվածության, միասնականության կոչերով և ողջունում է այն բոլոր ԶԼՄ-ներին, լրագրողական կազմակերպություններին, որոնք համակողմանի, հավասարակշռված, անաչառ լրատվության կողմնակից են և աշխատում են այս սկզբունքով՝ ուշադրության կենտրոնում պահելով քաղաքակիրթ բանավեճի և երկխոսության սկզբունքները, էթիկական ու մասնագիտական նորմերի պահպանումը: Գործակալությունը նպատակ ունի միավորել մեր ներուժը ազատ գաղափարների արտահայտման, տարածման և իրագործման, ինչպես նաև ազատ ու պատասխանատու խոսքի մշակույթ ձևավորելու հարցում: Այսօր «Հենարան էյ էմ» գործակալության հետ միաժամանակ գործում են «Հենարան» մամուլի ակումբը և «Հենարան էյ էմ» («HENARAN.AM») ինտերնետային տեղեկատվական կայքը[8]:

«Առկա» տեղեկատվական գործակալությունը հիմնադրվել է 1996 թ. մայիսի 1-ին և աչքի է ընկնում է իր պրոֆեսիոնալիզմով: Գործակալության հավատամքն են օպերատիվությունը, հավաստիությունը, հուսալիությունը, անաչառ ու ժամանակակից տեղեկատվության մատակարարումը, հատկապես ֆինանսատնտեսական տեղեկատվության բնագավառում: Անցած տարիների ընթացքում «Առկան» աշխատել է անընդհատ բարելավել իր կողմից մատուցվող տեղեկատվական

[8] Կառույցի գլխավոր խմբագիրն է Լիլիթ Դավթյանը:

գործընթացները՝ մնալով առաջինը տնտեսական տեղեկատվական շուկայում: Չնայած այն բանին, որ տարեցտարի ուժեղանում է մրցակցությունը, գործակալությունն ավելի պատասխանատվությամբ է ներկայանում իր ընթերցողներին՝ մշտապես փորձելով հասկանալ, թե այսօր ինչ է կատարվում աշխարհում, դեպի ուր է գնում մեր ժողովուրդը, ինչպիսի արժեքներ է այն քարոզում, ինչի մասին է ուզում հայտարարել աշխարհին և, վերջապես, պարզել՝ ինչ է ուզում մեզ ասել աշխարհը: Տարիների ընթացքում ընդամենը մեկ տեղեկագիր հրապարակող գործակալությունից «Առկան» դարձել է Հայաստանի առաջավոր տեղեկատվական-վերլուծական գործակալություններից մեկը, որը թողարկում է (հայերեն, անգլերեն և ռուսերեն) մինչև 10 տեղեկատվական արտադրանք: Դրանք ունեն մի քանի մասնագիտացված ինտերնետ-բազաներ, ինչպես, օրինակ, «Թելեկոմ.առկա.էյէմ» (telecom.arka.am), «Արմբանկ. առկա. էյէմ» (armbanks.am), «Բոնդս. էյէմ» (bonds.am), «Անտիքրիզիս. էյէմ» (anticrisis.am), որոնք իրենց բիզնեսն ինտերնետային ռազմավարական ուղղությամբ զարգացնելու նպատակով սկսեցին գործել 2009 թ. հոկտեմբերից:

Գործակալության ֆինանսա-բանկային «Արմբանկ. առկա.էյէմ» (armbanks.am)[9] ինտերնետային կայքը հավակնում է դառնալ Հայաստանի առաջատարն այդ ոլորտում: Օպերատիվ լրատվությանը զուգընթաց, կայքում տեղադրվում են բանկերի, ապահովագրական ու վարկային կառույցների մասին վիճակագրական ամենաթարմ տվյալները և վերլուծական նյութեր: Հաճախորդները կարող են օգտվել նաև նոր ծառայություններից՝ առցանցի միջոցով (օնլայն ռեժիմով) մասնակցել կոնֆերանսների ու քննարկումների և նույնիսկ լսել գործակալության տրամադրած տնտեսական տեղեկատվությունը: «Անտիքրիզիս. էյէմ» (anticrisis.am) կայքը հնարավորություն է ընձեռում մշտապես հետևելու Հայաստանի տնտեսության վիճակին, տեղյակ լինելու կառավարության ձեռնարկած հակաճգնաժամային քայլերին, իր խորհուրդներով ու մեկնաբանություններով օգնելու այդ հարցերում: «Բոնդս. էյէմ» (bonds.am) կայքի միջոցով հնարավոր է տեղեկանալ ֆոնդային սակարանում ընթացող գործընթացներին, տեսնել պետական արժեթղթերի և ակցիաների աճուրդի արդյունքները, ծանոթանալ աճուրդի մասնակիցների ու բնագավառի փորձագետների կարծիքներին: «Առկան» Անդրկովկասում և Հայաստանում առաջինը նախաձեռնեց և ստեղծեց «Մեդիագիդ. էյէմ» (mediagid.am) նորությունների «ագրեգատը»: Այդ ամենին զուգահեռ, գործակալությունն իր բաժանորդներին առաջարկում է լրացուցիչ ծառայությունների փաթեթ, պարբերաբար հանդես է գալիս միջազգային կոնֆերանսների, ֆորումների և ցուցահանդեսների տեղեկատվական հովանավորի դերում:

---

[9] Կայքում, նյութերից բացի, գլխավոր էջի աջ հատվածում տեղադրված է ինչպես շուկայում, այնպես էլ հայաստանյան շատ բանկերում առաջարկվող՝ տարադրամի փոխարժեքի մասին տեղեկատվություն:

Տարբեր տարիներին «Առկան» ճանաչվել է Հայաստանի լավագույն տնտեսական գործակալություն, արժանացել Որակի համար միջազգային աստղի (International Star Award for Quality) պատվավոր մրցանակի[10]: Քանի որ ժամանակակից աշխարհում, որտեղ իշխում են բարձրակարգ տեխնոլոգիաները, բացվում են աներևակայելի հնարավորություններ, իսկ տեղեկատվությունն օգտագործողի համար դառնում է որակյալ ապրանք, «Առկայի» անձնակազմը, համոզված, որ տեղեկատվությունը բիզնես է, ձգտում է իր գործն անել լավ և որակյալ, որպեսզի սպառողները նախապատվությունը տան իր ապրանքին: 1999 թվականից «Առկա» գործակալությունը հրատարակում է «Հայաստանի բանկերի հիմնական ցուցանիշները» (այսուհետև՝ «Հայաստանի բանկերը»), 2005 թ. մարտից՝ «Հայաստանի վարկային կազմակերպությունները», 2006 թ. մայիսից՝ «Բանկերի ֆինանսական ցուցանիշները»՝ ըստ ամենամյա անկախ աուդիտորական ստուգումների տվյալների, իսկ 2008 թ. հուլիսից՝ «Ապահովագրական ընկերությունների գործունեության ցուցանիշները» եռամսյա տեղեկագրերը, որոնք տեղեկատվությանը զուգընթաց ներկայացնում են խորը և բազմակողմանի վերլուծական նյութեր, լավագույս օգնում գործարարներին՝ կողմնորոշվելու մերօրյա բարդ ու հակասական գործընթացներում:

Միջազգային լրատվական «Նովոստի-Արմենիա» անկախ գործակալությունը գրանցվել է 2005 թ. հուլիսին: Այն նպատակ ունի օպերատիվ ու անաչառ լուսաբանել Հայաստանի քաղաքական, սոցիալական և մշակութային կյանքը: 2005 թ. դեկտեմբերի 8-ին «Նովոստի-Արմենիան» և ռուսական միջազգային լրատվական «ՌԻԱ նովոստի» (“ՀԼԸ վՏՉՏրՅՌ”) գործակալությունները համագործակցության և տեղեկատվության փոխանակման մասին պայմանագիր կնքեցին, որը հնարավորություն ընձեռեց ԱՊՀ երկրների, մասնավորապես Ռուսաստանի բնակչությանը տեղյակ լինել Հայաստանում առկա գործընթացներին, իսկ Հայաստանի բնակչությանը՝ ԱՊՀ երկրների ու Ռուսաստանի իրադարձություններին, ինչպես նաև ծանոթանալ քաղաքական նշանավոր գործիչների հարցազրույցներին ու անկախ փորձագետների տեսակետներին: «Նովոստի-Արմենիան» 2009 թ. մարտին «Եվրոպական ինտեգրացիա» հասարակական կազմակերպության և Հայաստանում Մեծ Բրիտա- նիայի դեսպանատան կողմից անցկացված մրցույթում լավագույնն է ճանաչվել «Եվրոպական թեմաների մոնիթորինգը հայկական ԶԼՄ-ներում» ծրագրի «Եվրոպական թեմաներն առավել լայնորեն լուսաբանող ԶԼՄ» անվանակարգում: 2009 թ. հուլիսին Բիզնես ինիշըթիվ դիրեքշնս (Business Initiative Directions-BID)

---

[10] *2002-2003 թթ.* Business Initiative Directions *կազմակերպությունը «Առկա» գործակալությանը* Gold *կատեգորիայում պարգևատրեց Որակի համար միջազգային աստղ* (International Star Award for Quality) *մրցանակով, իսկ 2000 թ. արդյունքներով՝ «Առկան» ՀՀ Կենտրոնական բանկի կողմից ճանաչվեց Հայաստանի լավագույն տնտեսական գործակալություն:*

միջազգային կազմակերպությունը «Նովոստի-Արմենիա» գործակալությանը Ոսկե տեսակի («Gold՝ category») Միջազգային աստղ մրցանակ է շնորհել:

«Նովոստի-Արմենիա» գործակալության կայքը՝ «Յանդեքս կետ ռու» (Yandex.ru), որոնողական համակարգի վարկածով, Հայաստանի լրատվական կայքերի վարկանիշում մեջբերման թեմատիկ ինդեքսով, ավանդաբար առաջին տեղն է զբաղեցնում: Հայկական վեբ-ռեսուրսների վարկանշային «Սրքլ կետ էյէմ» (Circle.am) համակարգի՝ «Ինտերնետը Հայաստանում» վերջին զեկույցի համաձայն, «Նովոստի-Արմենիա» միջազգային տեղեկատվական գործակալության կայքը՝ «Նյուսարմենիա կետ ռու» (www. newsarmenia.ru), շարունակաբար բարելավում է իր դիրքերը տասը ամենահայտնի հայկական կայքերի շարքում: Վերջին տվյալներով, վարկանիշի առաջին տասնյակում են հայտնվել վեց լրատվական ռեսուրսներ, այդ թվում՝ «Նովոստի-Արմենիան» (www.newsarmenia.ru), որի այցելուների թիվը, ըստ «Սրքլ կետ էյէմ»-ի, 2011 թ. մարտին կազմում է 187,69 հազար, որն ավելի քան 33 հազարով ավելին է, քան 2010 թ. փետրվարին: Ուշագրավ է, որ 100 առաջատար կայքերի թվում պահպանվում է տեղեկատվական նախագծերի նախապատվությունը:

«Արմեդիա» տեղեկատվական-վերլուծական գործակալությունը[11] հիմնադրվել է 2006 թ. սեպտեմբերի 21-ին (ռուսական տարբերակը՝ 2010 թ. սեպտեմբերի 1-ին): Նպատակն է ապահովել տեղեկատվություն, արտաքին քաղաքականության նկատմամբ հատուկ ուշադրություն, վերլուծություն ու քաղաքական մեկնաբանություններ: Տեղեկատվական նյութեր է հրատարակում և վերլուծական ակնարկներ տրամադրում բնակչության սոցիալական վիճակի, Հայաստանի հասարակական կազմակերպությունների, Հայաստանում դիվանագիտական ներկայացուցչությունների, միջազգային կազմակերպությունների գործունեության, քաղաքականության բնագավառում վարկանիշների, Հայաստանում և կովկասյան տարածաշրջանում սոցիալ-տնտեսական իրավիճակի ու հանրային կյանքի տարբեր ոլորտների վերաբերյալ: Աշխատանքային հիմնական ուղղվածությունը արտաքին աշխարհը, հատկապես Եվրոպան ներկայացնելն է: Չի կարևորում իրադարձություններին և իրավիճակներին անդրադառնալը «թեժ» հետքերով, այլ՝ այդ իրադարձությունների վերաբերյալ սեփական վերլուծական տեսակետն արտահայտելը, որով հնարավոր կդառնա հայկական ԶԼՄ-ների շարքում զբաղեցնել իր յուրահատուկ տեղը՝ շեշտադրելով Հայաստանի շուրջ ընթացող, Հայաստանին «կողմ» և «դեմ» գործընթացները, սպասվող քաղաքական մարտահրավերներն ու դրանց լուծման հնարավոր ուղիները: Ամեն տեսակի «հայկականի» լուսաբանումն արտաքին քաղաքականության մեջ, այդ թվում՝ Սփյուռքն ու Ղարաբաղը. ահա թե որն է գործակալության խնդիրը: Մեր օրերում մի շարք միջազգային կառույցներ տարբեր ձևաչափերով և տարբեր առիթներով ժամանակ առ ժամանակ

[11] Գործակալության մասին որոշ տեղեկություններ ճշտել ենք նրա հիմնադիր և անփոփոխ ղեկավար Կարեն Բեքարյանի հետ մեր ունեցած զրույցների ընթացքում:

անդրադառնում են Ղարաբաղին ու դարաբաղյան կարգավորման գործընթացին: Այդ անդրադարձերը պարունակում են վերլուծության ենթակա բավական հարուստ նյութ, միաժամանակ, անուղղակիորեն արտացոլում են հայկական պետությունների տեսակետների և մոտեցումների միջազգային ընկալման աստիճանը: Այս ամենը կարիք ունի հստակ դասակարգման ու վերլուծության: «Արմեդիան» մշտապես հաշվի է առնում այն հանգամանքը, որ մեր երկիրն ունի նշված կառույցների հետ շարունակական աշխատանքի ձևաչափեր, որ կառույցներից յուրաքանչյուրի քայլերին լիարժեք տեղեկացվածությունը միայն կարող է ապահովել կառույցի տրամաբանությունից բխող արդյունավետ աշխատանք: Մյուս կողմից, ներկայումս միջազգային կամ տարածաշրջանային տարաբնույթ ֆորումների շրջանակներում բավական շատ են մեր քաղաքացիների շփումներն ինչպես Ադրբեջանի և Թուրքիայի, այնպես էլ այլ պետությունների ներկայացուցիչների հետ: Գաղտնիք չէ նաև, որ Ադրբեջանը նման կամ որևէ այլ առիթ փորձում է օգտագործել իր պետական դիրքորոշումը ներկայացնելու և հակահայկական տրամադրություններ սերմանելու համար: Ելնելով այս ամենից՝ առավել քան կարևոր է մեր մասնակիցների պատրաստվածության աստիճանը՝ դիմագրավելու նշված թշնամական գործողություններին: Այս խնդրի լուծմանը մեծ նպաստ կարող են բերել համապատասխան (իրավական, քաղաքական, պատմական և այլ) փաթեթների պատրաստումն ու տարածումը: Այս կարևոր իրողությունն հաշվի առնելով՝ «Արմեդիան» ներկայացնում է դարաբաղյան կարգավորման գործընթացին առնչվող միջազգային փաստաթղթերի վերլուծություններ, կարգավորման իրավական, քաղաքական, պատմական հայեցակետերին առնչվող նյութեր, նշված թեմաներով բացառիկ հարցազրույցներ:

Առանձնահատուկ նշանակություն տալով Հայաստանի արտա-քին քաղաքականության եվրոպական ուղղությանը՝ գործակալությունը կարևորում է Եվրոպայի փորձը, արդի վիճակը, «հին աշխարհի»՝ ինտեգրման գործընթացները, Եվրամիության անընդհատ ընդլայնումը (հատկապես դեպի արևելք), ինչպես նաև Եվրոպայի հետաքրքրությունները մեր տարածաշրջանի նկատմամբ: «Հայացք աշխարհին» հաղորդման միջոցով «Արմեդիան» փորձում է հնարավորինս շատ երկրներ դարձնել առավել ճանաչելի: Տարբեր երկրներից բերված բացառիկ նյութերը հրապարակվում են տեսանյութերի, ճանապարհային նոթերի, ֆոտոռեպորտաժների, հոդվածների կամ հեռուստատեսային քննարկումների տեսքով: Հետևելով «Արմեդիայի» տեղեկատվությանը՝ կարելի է ծանոթանալ Երկիր մոլորակին, իմանալ աշխարհում Հայաստանի զբաղեցրած դիրքի մասին և տեղեկանալ տարածաշրջանում ապագա զարգացումների գործընթացներին: Գործակալությունը Վատիկանի «Տելեպաչե» հեռուստա- ընկերության «Տելեպաչե-Հայաստան» հեռուստաժամի հետ լավագույնս համագործակցելու համար արժանացել է Հռոմի պապի հատուկ շնորհակալական օրհնություն-նամակին:

2000 թ. ապրիլի 2-ին գործարկվեց «Պանարմենիան նետվորք» (PanARMENIAN Network) հայկական առաջին ինտերնետային լրատվական-վերլուծական գործակալությունը, որի գործունեության հիմնական ուղղություններն են համահայկական միասնական տեղեկատվական դաշտի կայացումը և Հայաստանը միջազգային հանրությանը պատշաճ կերպով ներկայացնելը: Իր նպատակներն ընկերությունն իրագործում է տեղեկատվական և հաղորդակցության տեխ-նոլոգիաների միջոցով: Այն նաև հայկական ամենահիշատակվող լրատվամիջոցներից է: «Պանարմենիան. նեթը» «Պանարմենիան մեդիա» (PanARMENIAN Media) ընկերության նախագծերից է:

«Պանարմենիան նեթի» լրատվությունն ապահովում է 2001 թ. հունիսից 2009 թ. կազմավորված «Պանարմենիան նյուս» (PanARMENIAN News) տեղեկատվական-վերլուծական գործակալությունը, որի ամբողջական լրահոսը տպագրվում է «Պանարմենիան. նեթ» կայքում, շաբաթական 7 օր՝ հայերեն, ռուսերեն, անգլերեն: Կայքը բաղկացած է 7 հիմնական բաժիններից, որոնցից յուրաքանչյուրը պարունակում է լրահոս, վերլուծական նյութեր, տեսություններ, հարցազրույցներ և այլ թեմատիկ տեղեկատվություն: Սեփական տեղեկատվությունից բացի, լրատվական ծառայությունն օգտվում է տեղական և միջազգային գործակալությունների լրահոսերից: Նյութերը հավաքելու, պատրաստելու և հրապարակելու համար օգտագործվում են տեղեկատվության ավտոմատացման և համակարգման հատուկ մշակված ծրագրեր: 2009 թ. սկզբին սկսվեց հանգույցի հա-մար ամբողջովին նոր ծրագրային ապահովման մշակումը: 2010 թ. ապրիլի 2-ին վեբ տեխնոլոգիաների վերջին զարգացումներին համապատասխան գործարկված նոր «Պանարմենիան. նեթը» նպատակ ունի դառնալու ամենահարմար տեղեկատվական ռեսուրսը այն մարդկանց համար, որոնց հետաքրքրում են Հայաստանում տեղի ունեցող կամ երկրին առնչվող իրադարձությունները: Կայքի նոր հարթակը կարող է միաժամանակ ընդունել տասնյակ հազարավոր այցելուների, ստեղծվում է տեղեկատվության ապահովություն և տրամադրվում առավել օպտիմալ ինտերֆեյս:

«Պանարմենիան. նեթը» ընձեռում է նաև գովազդային նոր հնարավորություններ և ավելի կատարյալ օպտիմալացում փնտրտուքային համակարգերում և ինտեգրում է սոցիալական մեդիա կայքերին: Այն մշտապես զարգանում և կատարելագործվում է, ինչը նկատելի է դառնում կայքում նոր ֆունկցիոնալության, թարմացումների և հավելումների տեսքով:

«Նյուզ կետ էյէմ» (News.am) լրատվական-վերլուծական գործակալությունը սկսել է գործել 2009 թ. հուլիսի 1-ից: Այն անկախ լրատվական կառույց է և մասնագիտացած է լրատվական, վերլուծական նյութերի պատրաստման ու դրանց սփռման գործում: Գործակալության հիմնական լսարանն այն անձինք ու կազմակերպություններն են, որոնք շահագրգիռ են ստանալու հավաստի տեղեկատվություն Հայաստանի ու Լեռնային Ղարաբաղի, ինչպես նաև Սփյուռքի հասարակական, քաղաքական ու տնտեսական իրադարձությունների մասին: «Նյուզ կետ էյէմ»-ը ուշադրության

կենտրոնում է պահում նաև Հարավային Կովկասի երկրների կարևոր իրադարձությունները, խնդիրներն ու զարգացումները: Գործակալությունը 4 լեզվով՝ հայերեն, ռուսերեն, անգլերեն և թուրքերեն, հրատապ ու թարմ լրահոս է ապահովում Հայաստանից, Լեռնային Ղարաբաղից և, ընդանրապես, աշխարհի այն բոլոր մասերից, որտեղ հայեր են ապրում: Ներկայացնում է նաև Հայաստանի, Վրաստանի, Ադրբեջանի, Իրանի, Թուրքիայի, Ռուսաստանի տպագիր և էլեկտրոնային լրատվամիջոցների, ինչպես նաև աշխարհի առաջատար հրատարակությունների տեսություն: Հրապարակում է թեմատիկ տեղեկագրեր, հարցազրույցներ, վերլուծություններ, մեկնաբանություններ, թղթակցություններ և ֆոտոթղթակցություններ: «Նյուզ կետ էյէմ»-ը մեզանում առաջին գործակալությունն է, որ մատակարարում է շուրջօրյա տեղեկատվություն: Շնորհիվ այն բանի, որ այդ տեղեկատվությունն անաչառ է, հավաստի ու չքաղաքականացված, նրանից հղումներ են կատարում աշխարհում շատ հայտնի գործակալություններ: Այստեղ աշխատում են մտավոր բարձր կարողությունների տեր լրագրողներ, որոնցից շատերն արժանացել են հայրենական ու արտասահմանյան տարբեր մրցանակների: Գործակալությունն ունի նաև մամլո սրահ, որը հագեցած է այն ամենով, ինչն անհրաժեշտ է մամուլի ասուլիսներ, կլոր սեղաններ ու սեմինարներ կազմակերպելու համար:

1991 թ. Մեսրոպ Մովսեսյանի ստեղծած «Ա1+» հեռուստաընկերությունը 1997 թ. ապրիլի 21-ին հիմնադրեց «Այբ-ֆե» լրատվական-վերլուծական գործակալությունը, որը հայկական լրատվական դաշտում առանձնացավ իր բերած նորություններով, սպառիչ, համառոտ, պարզ ու դինամիկ տեղեկատվությամբ թելադրեց նոր ոճ: Հատկապես նախագահական, խորհրդարանական ու տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների և տարածաշրջանային այլ նշանակալից իրադարձությունների լուսաբանման ժամանակ «Այբ-ֆե»-ն, բավարարելով հասարակության՝ հրատապ, անաչառ, բազմազան տեղեկատվություն ստանալու և բազմակարծություն ապահովելու իրավունքը և շնորհիվ իր օպերատիվության ու անկողմնակալության, շատ արագ ձեռք բերեց սեր, վստահություն և բարձր վարկանիշ: Առաջիններից մեկն արձագանքելով տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման գործընթացին՝ «Ա1+»-ը ստեղծեց Հայաստանում և տարածաշրջանում առաջին տելետեքստը: Այն ներառում է բազմաժանր տեղեկատվություն՝ օրվա նորություններից մինչև հեռուստածրագրեր, տրանսպորտային, մշակութային, բանկային և այլ տեղեկատվություն: Այստեղ տեղադրվում է ոչ միայն «Այբ-ֆե»-ի, այլև հայաստանյան լրատվական այլ գործակալությունների ռուսերեն տեղեկատվությունը: Տելետեքստը տեղեկատվության ու ժամանցի առանձին աշխարհ է, ունի ինտերակտիվ բնույթ: Այն հնարավորություն է ընձեռում հեռախոսի և համակարգչային ստեղնաշարի միջոցով մտնել ինտերնետ, ուղարկել և ստանալ էլեկտրոնային հաղորդագրություններ՝ խնայելով ֆինանսական միջոցները: Տելետեքստը գործում է ինքնաֆինանսավորման սկզբունքով, բազմաթիվ

ընկերություններ ցանկանում են տեսնել իրենց ապրանքի կամ ծառայության գովազդը տելետեքստի էջերում:

«Այբ-ֆե»-ն համագործակցում է ամերիկյան CNN, NBC, բրիտանական WTN և BBC, ֆրանսիական TF1, գերմանական ZDF, Ռուսաստանի PTP, HTB, МИР հեռուստաընկերությունների ու մեծ թվով լրատվական գործակալությունների հետ: Գործունեության անցած տարիների ընթացքում «Այբ-ֆե»-ն, առանձին լրագրողներ ու հեղինակներ արժանացել են բազմաթիվ մրցանակների, պատվոգրերի, շնորհակալագրերի: 2002 թ. «Ինտերնյուս» հասարակական կազմակերպության կողմից «Այբ-ֆե»-ն, որպես հեռանկարային գործակալություն, արժանացել է հատուկ մրցանակի:

Տեղեկատվական յուրահատուկ կառույց է հայերեն Վիքիփեդիա հանրագիտարանը[12], որի նպատակն է աշխարհի բոլոր լեզուներով առկա՝ վավերական ու փոխադարձաբար հղված փաստացի գիտելիքների ամբողջական շտեմարան ստեղծելը: Նախագիծը, որ 2001 թ. հունվարին 15-ին սկսել են Ջիմմի Ուելսը և Լարի Սանգերը, XXI դ. տեղեկատվական տեխնոլոգիաների բուռն առաջընթացի ու «վիրտուալ հանրություն» երևույթի զարգացման արդյունքն է: Ներկայումս այն համացանցի ամենաօգտագործվող հանրագիտարանային կայքն է: Վիքիփեդիան գնահատվում է անվճար լինելու, ազատության և մատչելիության, թեմաների հսկայական բազմազանության և հիրավի մանրամասն տեղեկությունների համար: Ազատ ու մատչելի է հանրության գաղափարը, այն հանրության, որը միավորված է տեխնոլոգիայով, որտեղ հետզհետե մեծանում են հաղորդակցվող տեղեկությունների ծավալները, ակտիվորեն գրվում են հոդվածներ, որոնք և քննարկվում ու ազատորեն տրամադրվում են համաշխարհային հասարակությանը: Այս առանձնահատկությունները Վիքիփեդիան դարձնում են բացառիկ երևույթ ոչ միայն որպես հանրագիտարան, այլև որպես տեղեկատվական ռեսուրսների աննախադեպ աղբյուր: Այն բաց է յուրաքանչյուր գրել ցանկացողի համար և կարող է ազատորեն խմբագրվել ընթերցողների կողմից: Հոդվածների արժանահավատությունն, ըստ էության, կախված է գրողի պատասխանատվությունից ու բարեխղճությունից, իսկ Վիքիփեդիա համայնքը պիտի անդադար աչալուրջ լինի վանդալիզմի հնարավոր դեպքերը կանխարգելելու և բռնության կողմնակալ ակնառու տեսակետներից խուսափելու համար: XXI դարում անդառնալիորեն արագացող՝ տնտեսական, մշակույթային ու սոցիալական գլոբալացման իրողության մեջ Վիքիփեդիա նախագիծն իր էությամբ և նպատակներով խրախուսում է լեզվական ու մշակույթային բազմազանության պահպանումը՝ հնարավորություն տալով մարդկության բոլոր՝ ինքնագիտակցող

[12] Խոսքը «Վիքիփեդիա ազատ հանրագիտարան» բազմալեզու նախագծի մասին է: Անունը, բառացի թարգմանած՝ արագ հանրագիտարան, կազմված է հավայան «վիքի»՝ «արագ» և հունարեն «էնցիկլոպեդիա»՝ «հանրագիտարան» բառերից: Վիքիպեդիան համագործակցական կայքեր ստեղծելու տեխնոլոգիա է:

ազգային ինքնություններին, առանց լրացուցիչ նյութական ներդրումների, բացարձակապես կամավոր հանրային մասնակցությամբ, ստեղծել իրենց ուրույն՝ բազմակողմանի ու բազմաշերտ գիտելիքների թվային շտեմարանը:

Վիքիփեդիայի յուրաքանչյուր հոդված ներքին բազմաթիվ հղումներով ընթերցողին կապում է հանրագիտարանի մյուս էջերի հետ՝ նրան ուղղորդելով տեղեկատվության օվկիանոսում: Վիքիփեդիան գրվում է, կարելի է ասել, համայն գրագետ մարդկության համատեղ ջանքերով՝ հիմնականում անանուն և անվճար[13]: Ըստ էության, աշխարհում ապրող յուրաքանչյուր մարդ, ունենալով համացանցին կապված համակարգիչ, կարող է խմբագրել, սրբագրել կամ վավերացնել հանրագիտարանի հոդվածները և ցանկացած թեմայով նոր հոդվածներ գրել: Վիքիփեդիայի հանրությունը գործելակերպի բազմաթիվ սկզբունքներ ու հրահանգներ է մշակել հանրագիտարանը բարելավելու նպատակով, սակայն ներդրում անելու համար չի պահանջվում ծանոթանալ այդ բոլոր սկզբունքներին:

Ստեղծվելուց ի վեր Վիքիփեդիան արագորեն աճել և դարձել է բազմակողմանի տեղեկությունների ամենախոշոր ցանցային կայքը: 2010 թ. հունվարի տվյալներով, Վիքիփեդիան ամսական ունենում է շուրջ 68 միլիոն այցելու[14]: Ներկայումս ամբողջ աշխարհից օրական գրեթե 80 միլիոն մուտք է լինում այս կայքը, ցանցում կան ավելի քան 90,000 մասնակից[15] հոդվածագիրներ, որոնք 272 լեզվով (որոնցից ավելի քան 2 մլն-ը պատկանում են անգլերեն տարբերակին) միաժամանակ ներկայացնում են ավելի քան 15 մլն. հոդված[16]:

Գաղտնիք չէ, որ զանգվածային լրատվամիջոցները, տեղեկատվական գործակալություններն ու ընդհանրապես ցանկացած տեղեկատվական աղբյուր կարող են գործուն կերպով նպաստել լավ փոխըմբռնմանը, մերձեցմանն ու համագործակցության ընդլայն- մանը: Սակայն, ցավոք, լինում է նաև հակառակը: Երբեմն որևէ չճշտված, միտումնավոր կամ էլ պատվիրված տեղեկատվություն կարող է ինչ-որ չափով վնասել երկկողմանի հարաբերություններին: Դրա համար էլ պետք է պատասխանատվությամբ մոտենալ այդ կարևոր հիմնախնդրին: Մերօրյա տեղեկատվական հեղեղի պայմաններում ճիշտ կողմնորոշվելու, հատկապես համացանցի ընձեռած հնարավորություններից լավագույնս օգտվելու համար անհրաժեշտ է իրական պատկերացում ունենալ տեղեկատվություն մատուցող կառույցների մասին:

---

[13] *2007 թ. սեպտեմբերին այն ուներ 253 անկախ, լրիվ առանձին լեզվական տարբերակներ:*

[14] *http://siteanalytics.compete.com/wikipedia.org?metric=uv*

[15] *http://meta.wikimedia.org/wiki/List_of_Wikipedias#Grand_Total*

[16] *Նույն տեղում:*

ТЕЛЕГРАФНЫЕ АГЕНТСТВА АРМЕНИИ

САРГСЯН С. Т.

Резюме

Информационные войны современного мира имеют непосредственное отношение к Республике Армения, при этом они чреваты определенными опасными последствиями. Последнее требует создания слаженной системы информационной безопасности в республике. Несомненно, наиболее действенным способом борьбы с этим является четкая работа информационных структур. В ряду последних главную роль играют информационно-аналитические агентства и соответствующие веб-сайты. Информация о последних очень важна, однако она отсутствует и, как отмечают специалисты, эта сфера в нашей республике практически не изучена. Подтверждением тому является отсутствие литературы по данной теме.